

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՊՏՈՒՂ ՅԱՆԿԱԼԻ

Ո Ր Է

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ «ՍՈՒՐԲ ԵՍ ՏԷՐ»,

Հ Ա Ր Յ Ի Ն .

Շ Ա Ր Ա Գ Ր Ե Ա Լ

Ի ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԵՊԵՏԷ

Ե Լ Թ Ո Ւ Ն Ե Ա Ն .

ԿԱՆԻՍԱՃԱՌ ԲԱՆԻՍ .

Օւառ ի կորովական ականողաց՝ արծուոյն սրատեսութիւն, առ ի բթատեսութեան ի միջօրէական ժամանակի հաւապատիր թռչնոց յաւերակս անապատի, կամ ի խաւարչուտ տեղիս ընդմտելոյ, և զառ ի պերճապանձ չքնաղ գեղաղան տեսլեանց, անհամեմատ գեղ Սիրամարզի՝ ընդ պարբապաւ հանդէպ արփւոյն նստելոյ, առ մթնորակ տեսութիւն գունոյ տգեղ թռչնոյն ճայելի, բաղդատութեամբ ի մէջ արկանել յակզբան բանիս՝ ի դէպ վարկանիմ. քանզի զտկարօքն արհամարհել հզօրաց, և գեղեցկին ընչացս առնել ընդ խոշորագեղ տեսիլ տգեղին, և այնպէս զմիմեամբք զծաղու գալ՝ քաջն յիմաստասիրաց անշուշտ ըստ ասացելոցս ծանուցանել ի դէպ վարկանի: Սովին բաղդատութեամբ ոչ ամօթ համարիմ խնդրանօք հայցել ի սոյնասարաս կրից հարստահարեալ սիրելեաց՝ անբասիր զմեզ առնել, զիտելով ի կարիս զիջանիլ տկարութեան: Եւ արդ՝ յըն-

թեռնուլ ի սմա զվկայաբանութիւնս Առուներեայ, մի՛ ընդ լայնածաւալ մեկնութեան նորա բաղդատեալ՝ վաղվաղակի դատեսջիք ըստ միտս, ոչ երևել ընտանութիւն ընդլայնածիք բանից նորին Առուներեայ, այլ զիտել հաւաստեալ, զի թէպէտ ի նորա բանիցն է զորս ածաք ի վկայութիւն, այլ ոչ ի լայնածառ բանից նորա, բայց եթէ ի համառօտութենէ գրոց նորին, զոր արարեալ է հանձարափայլ հայրն իմ ըստ հոգւոյ՝ Պօղոս աստուածիմաստ վարդապետն, և փոխանորդ Սըրբոյ ուխտին Արուսաղէմի:

Եպաքէն վերստին կրկնեալ կնքեցից զբանս իմ այսու, զի ընդ դուզնաքեայաշխատութիւն մեր տեսութեան բանիս որ ի հարկեցուցիչ բանից հարազատ մտերմի՝ և քանի մի օրհնեալ անձանց՝ ձեռնամուխ լինել ի սոյն ժպրհեցաք, յանդգնեալ ի վեր քան զկարս անձին, ի նրբահայեաց մտաց և ի քաջակիրթ ներհմուտ անձանց ընթերցողացդ զսոյն աղաչեմ՝ մի՛ լեցի իբրև ընդ բթատեսութիւն հաւապատիր աւերակածեմ հաւու, և կամ ընդ թխապարդ տեսիլ տգեղ թռչնոյն ճայելի՝ ունչքս ունել, այլ ընկայնուլ զսա ի գանձանակ ձեր սիրոյ՝ իբր աղքատ այրելոյն լումայի ի գանձանակ հասարակի, ներելով միանգամայն ի սմա սխալանաց եղելոց, առ մեզ դարձուցեալ զայն՝ յակամայից անգիտութիւն, և ի սմանէ քաղեալ պտուղս օգտակարս ի փառս ամենօրհնելոյն ի կանայս Արբոյ կուսին Մարիամու վերբնճայել, յորմէ պարգևին ամենայն շնորհք առնուաստացեալս մեզ, որոյ եմ և ես որդեգիր յարաժամ ապաւինեալ ի զթութիւնն մայրական:

«Սուրբ Էս Տէր Լ ի սուրբն հանգս-  
ցեալ, Բարեբանեալ ի վերին զօրաց Լ ի սը-  
բոց +ոց. Տէր Աստուած հարցն Բերոյ,» :

ՄԵՎՆՈՒԹԻՒՆ.

Սրբութիւնն Աստուծոյ յերկուս նկա-  
տի, ի ներքս՝ և առ արասքս. ըստ առաջ-  
նոյն ասի Սուրբ՝ զորով անփոփոխելի էա-  
կանութիւն ջինջ և պարզ՝ անմասն յա-  
մենայն բաղադրութենէ, և վերառեալ ի  
նիւթոց. ըստ որոյ զնեքնական սրբութե-  
նէ ասի յաստուածաբանից, անմասն յա-  
մենայն հոգեղէն և մարմնեղէն պղծութե-  
նէ, ըստ սմին և երանելին Աննա յաղօթս  
իւր ասէ՝ «Օ, ի սուրբ է Տէր Աստուած  
մեր,» . Ա. Թճագ. Բ:

Օ առաջինն ըստ սմին մտաց երգեաց ե-  
րանելիս ասելով, «Սուրբ Էս Տէր,» . պատ-  
ճառ յայսմ սրբութեան՝ է ամենապար-  
զութիւնն, գերամաքուր ներգործութիւն  
զոյն, յորոց ոչ երբէք այլայլ ի պակասիլ  
կամ յառաւելուլ. ուստի յատուկ է զմա-  
նէ ասիլ սուրբ. իսկ զարարածոց ասիլ  
սուրբ՝ ոչ ըստ ասացելոյս իմանի, այլ ըստ  
հաղորդակցութեան. ըստ որում միաւո-  
րին ընդ անսանջ մաքրութիւնն սիրով .  
սոյն և գերափայլ մաքրութեամբ պայծա-  
ռացեալ հոգեղէն էութիւնքն՝ աղազա-  
կեն ասելով. «Սուրբ. Սուրբ. Սուրբ. Տէր  
զօրութեանց,» : Ը ստ երկրորդին ծանուցա-  
նելով արարածոց զսրբութիւն իւր՝ ի հա-  
տուցանելն ըստ իւրաքանչիւր գործոց լի-  
նել սուրբ անուն իւր ի նոսա, այս է՝  
զՍուրբս վարձատրելով. Յայտ. Գ. 4, Բա-  
րեպաշտից ողորմելով. Ազեկ. Թ. 4,  
զհարաւս խոնարհեցուցանելով. Ասթեր՝  
Է. 10, զնոնարհս բարձրացուցանելով .

Տոննդ. ԽԵ. 40, որովք օգտեցուցանէ  
առ ինքն վերածել զմեզ, որ է վերջին վախ-  
ճան մեր. վասն զի վախճան մեր կրկին գո-  
լով, Աստուած՝ որ է բուն երանութիւն,  
և ստացումն նորին, արարածք եղծանե-  
լով զՍուրբ անուն նորա յինքեանց, և ոչ  
կարելով զնա յստանալ, սուրբ առնէ զա-  
նուն իւր ի նոսա, զի օգտեալք յայնմանէ  
խնդրեցն իմանալ. ուստի Տէրն մեր ու-  
սոյց մեզ՝ նմին փափազիլ, և զնոյն աղա-  
չել՝ յասելն «Սուրբ եղիցի անուն քո,» :  
Ապա յարէ զինի «եկեցէ արքայութիւն  
քո,» :

Ը ստ այսմ ևս ակնարկելով հոգելից  
այրն մեր սուրբն՝ Աերսէս Շ նորհալին  
իրբև քաղցրաձայն տատրակ երգեաց ասե-  
լով «Սուրբ Էս տէր,» . որպէս թէ կամի  
ասել «Գու Տէր՝ որ գերամաքուր Էս և  
ջինջ պարզութիւն՝ որով սուրբ ի քեզ և  
առ ամենեւին՝ յորս փայլ սրբութիւն քո.  
զորմէ վկայեն և հրեշտակք յիմանալի  
կերպիւ զսրբութիւնդ քաղցրաբարառ  
բարեբանն, և մարդիկ ի զնոյն քարողին,  
որոց և ծանուցանելով զսրբագործողու-  
թիւն քո, սրբացուցանելով զանսուրբս և  
արդարացուցանելով զանարդարս, կամիս  
զի կեցցեն միշտ սուրբք՝ յորս և հաճիս լի-  
նել յարածամ, և բնակիլ և հանգչիլ ի  
սիրտս նոցա ի սէր սրբութեան քո: Աւ-  
զայս հետեցուցանելով յայտ առնէ յա-  
սելն «Է ի սուրբս հանգուցեալ,» : Ա ինի-  
լն Աստուծոյ յամենայնի յերկուս նկա-  
տի՝ յընդհանրապէսն՝ և ի մասնաւորն:  
Ը ստ առաջնոյն՝ երրակի ասի լինիլ, գո-  
յացութեամբ որպէս հոգին ի մարմնի, և  
առաւել ևս. երկրորդ ներկայութեամբ՝  
որով զամենայն ըստ յամենայնի տեսանէ,

երրորդ իշխանութեամբ՝ որով կառավարէ  
զամենայն ըստ ամենայն շարժմանց և հան-  
գամանաց իւրեանց. ըստ երկրորդին այլ և  
այլ օրինակաւ ի սրբազան իրս օրհնու-  
թեամբ, ի բանականս ճանաչմամբ, յերա-  
նեալս տեսութեամբ, և յարդարս սիրով,  
և յայլս այլազգ օրինակաւ ասի լինիլ ի  
նոսա. ապա ըստ երկրորդին ասաց «և ի  
սուրբս հանգուցեալ», :

Հանգչիլ ասի զԱստուծոյ, ոչ ըստ մեզ՝  
զեանտկարանալե բնութիւնն ոչ երբէք վաս-  
տակի. այլ տեսանել զարարածս ի բարու-  
թեան՝ հանգչիլ ասի նմա. ըստ այսմ և  
Աստուածապատումն Մովսէս ասէ՝ «Եւ  
ետես Աստուած զե բարի են յոյժ արար-  
եալքն», և «հանգեաւ», Սեկն. Ծնն.  
Գ. . . զորմէ ասէ սուրբն Ափրեմ, ըստ  
ասելոյն մեծին Արդանայ, «Աստուած  
չառնելովն ոչ հանգչի. այլ հանգիստ նմա  
առնելն է», : Ըստ այսմ, «Հայր իմ մին-  
չև ցայժմ գործէ և ես գործեմ», : Այլ  
հանգչին է այն, զոր ասաց «Ահա բարի  
են», : Բարոյական օրինակաւ տեսանի ի  
նշմարելն զյայտնութիւնս մարգարէին Ա-  
ղիայի ի լերին Քորեբայ, յորում տեսանէ  
շարժումն սաստիկ և ոչ ի շարժմանն տէր,  
յայտ արարեալ թէ յանհաստատուն ի բա-  
րիս չիք տեղե Աստուծոյ. ըստ այսմ «Մե-  
ղաւորք իբրև զծով ծփեսցին՝ և զհանդիստ  
մի՛ գտցեն», : Եւսայ. ԾԼ. 20: Գարձեալ  
տեսանէ հողմ որ զլերինս քակիցէ և զվէ-  
մրս պատառիցէ, և ոչ ի հողմն տէր: Սո-  
վաւ ցուցանէ՝ թէ որք իբրև զհողմն ու-  
ռուցեալ են հպարտութեամբ, և բարկու-  
թեամբ դառնացեալք, ոչ և ի նոսա է  
Աստուած. ըստ այսմ թէ «Ես յո՞ հան-  
գեայց, եթէ ոչ ի հեզս և ի խոնարհս», :

Եւսայ. Կ.Օ. 2: Եւ դարձեալ հուր բոր-  
բոքեալ՝ և ոչ ի հուրն տէր, ցուցանելով  
միանգամայն՝ թէ որք բորբոքեալ են երկ-  
րաւոր՝ ընչեց ցանկութեամբ, և մարմնոյ  
հեշտութեամբ, ի նոցունց ևս հեռի է  
Աստուած. ըստ այսմ «Այրեցին ի հուր  
զսրբութիւն քո. պղծեցին զտաճար սուրբ  
քո», և թէ «Անկաւ հուր՝ և ոչ տեսին  
զարև», . սոյնպիսեաց ասացէ Տէրն՝ «Ար-  
թայք յինէն ի հուրն յաւիտեանական», .  
վերջապէս՝ տեսանէ ամպ լուսափայլ հան-  
դարտ և նազընթաց, յորում Տէրն նըս-  
տեալ, առ որ ամբաստանէ մարգարէն  
զԱզաբելէ. «Տէր զմարգարէս քո կոտորե-  
ցին», : Մովսէս ցուցանէ՝ թէ որք լուսա-  
ւորք են խղճիւք մտաց, հաստատք ի բա-  
րիս, և խոհեմք ի բանս, տեսանելով զսո-  
սա՝ հանգչի Աստուած ի բարութեան նո-  
ցա, փառաւորելով ոչ զհոգիս և եթ,  
այլ և զոսկերսնոցա ի բժշկութիւն մարդ-  
կան. ըստ այսմ «Աջ Տեառն ի վերայ  
սրբոց իւրոց, և փառք իւր հանգուցեալ է  
յոսկերս սրբոց. Շար. 684 եր: Ըստ այ-  
նրմ յայսմ երգէ և Սուրբս յասելն «և ի  
սուրբս հանգուցեալ»,՝ որպէս թէ ասէր,  
դու Տէր չես հեռի յարարածոց, և կամիս  
յամենայնսն մասնաւորապէս բնակիլ և  
հանգչիլ, ըստ բանի քում որ ի բերան  
մարգարէին, «Ես Աստուած մերձաւոր եմ  
և ոչ հեռաւոր եմ, բայց մեղք ձեր որո-  
շին ի մէջ իմ և ի մէջ ձեր», . և թէ  
«Հեշտութիւն իմ գու ընդ որդիս մարդ-  
կան, և զե՛ մեղք մեր որոշին զքեզ ի մէջ,  
հայցեմք ի քէն սուրբ արա՛ զմեզ ի մեղաց.  
որով կարայցեմք ի մեզ բնակեցուցանել  
զսրբութիւնդ, և տալ հանդիստ մեծի Տե-  
րութեան Աստուածութեան քո, որ ես

հանգիստ անձանց մերոց, և փառաւորիչ ի փառաւորելն զքեզ: Ըստ այնմ՝ «զփառաւորիչս իմ փառաւորեցից», և զտոյն տուր մեզ խնդրել ըստ երգոյն Սողոմոնի, «Ե՛կ եղբօրորդի իմ, ելցուք յանդաստան, հանդիցուք ի գեօղս. կանխեսցուք յայգիս, որով և արժանասցուք բարեբանել զքեզ ընդ հրեղինաց», : Եպա յարէ ասելով՝ «բարեբանեալ ի վերին զօրաց», . զբարեբանելն և զփառաւորելն վերին զօրաց զհաստիչն իւրեանց՝ նա ինքն Եստուած ասաց բարեկամացն Յօբայ. «Յորժամ եղեն աստեղք ծերք, ամենայն հրեշտակք աստեղաց օրհնեցին զես մեծաձայն, և ամենայն հրեշտակք իմ զովեցին զես», . Յօբ. 41. : Եւ կայծակնամաքուրն Եսայի ետես ի տեսլեան իւրում և լուաւ զբարեբանելն նոցա. Եսայ. 44. բայց այնչափ՝ որչափ ճանապարհորդ մի ընդ անցանելն կարացէ լսել. և յիտ նորա մարդարէն Կանխել տեսանէ զի բիւրք բիւրուց և հազարք հազարաց պաշտէին զնա: Եւ յիտ սոցա Սրբազան Եռաբեայն Պօղոս՝ յափշտակեալ յերրորդ յերկինս, և լուաւ բանս անձառ, այսինքն զետրհուրդ Եմենասուրբ Երրորդութեանն, զկարգս հրեշտակաց, և զօրհնութիւնսնոցա, և զպատրաստեալ փառս արդարոց, թէպէտ վերացելաբար: Սուրբն Յուստիանոս և Տերտուղիանոս ընծայեցին նուրբ մարմինս հրեշտակաց, և նոքօք յառաջ քան զժրհեղեղս ասացին ծնեալք ի հսկայից. հետևի ուրեմն թէ հրեշտակք նուրբ մարմնեղէն զործեօք ըստ մեզ բարեբանեն զՏէր. պատասխանէ սուրբն Եղեշէ. «Շսկայք անուանէին՝ ասէ՛ զայլ փանաքիս մեծահասակ էին, որպէս զԵնակիմոն, և զՍափայիմոն,

և զՊողոթաթ հսկայս անուանէ. և Վանական Վարդապետն գրէ, «Պատելով սատանայի թէ ի յաճախ խառնիցն զաւակ ոչ լինի, այնու կամէր առնուլ և բառնալ զճնունդս աճմանն. վասն որոյ ասէ սուրբն Եփրեմ, «Չոր մարդասէրն Եստուած ընդ դէմ նորա հնարս հնարեալ, զհոլովութիւն սերմանն մուծեալ, կազմէր անձոնի հասակս, որ և ի ճնունդս մեռանէին մարքն. զի իբրև զիժ էին, որոց ասեն արուքն ի խառնիցն, և էգքն ի ճնունդն սատակի. նոյնպէս և անարդարքն ասէ այնոքիկ հողուով մեռանէին ի խառնակիցն, և մարք հողուով և մարմնով մեռանէին ի ճնանիցն, և ապրեալ տղայքն լինէին հասակաւ անարգիլ և վիթխարի, հպարտացեալք անուանէին զինքեանս անմտութեամբ՝ յաւիտենից արք և հսկայք: Եպա չին նոքա հրեշտակքն, և ոչ ի նոցանէ ծնեալք, զի առհասարակ ջրասոյղ եղեալ նոքա կորեան, և ոչ ունին զմարմինս յինչ և իցէ նիւթոց, և բարեբանել նոցա ոչ է մարմնական զործեօք, այլ մտօք իմանալապէս:

Եսիցես երկրորդ. զեմորդ ապա առաքեալն Պօղոս ասէ, «Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ՝ և զհրեշտակաց», . ուրեմն որպէս մարդ, նոյնպէս և հրեշտակքն խօսին, կամ բարեբանեն զՏէր. թող զայն զի Արողինէս ասէ, «Շրեշտակք գտին զմարդկային լեզուաց զիւտ ի խառնակութեան Բարիլոնեան աշտարակաշինութեանն», . պատասխանեցից, ըստ որում մեկնչի, առաքեալն ոչ ասէ թէ հրեշտակք ունին զմարմնեղէն զործս լեզուաց որպէս մարդ, այլ կամի ասել, թէ ոչ միայն մարդկային յօդաւոր ձայնիւք, այլ թէ և

հրեշտակաց իմանալի խօսից կարողութեամբ ճոխացեալ իցեմ առանց սիրոյ, ոչ ինչ օգտիմ: Աւ որպէս Ասկեբերանն զրէ ի վերայ այն բանին, թէ յանուն Յիսուսի Քրիստոսի ծունը կրկնի երկնաւորաց, զմեծ և զսոնարհ պաշտօն նոցա ծընրադրութեամբ արտայայտեալ, սոյնպէս և առաքեալս անուամբ լեզուի՝ իրբև ծանօթագունիւ մեզ այլարանէ: Աւ այն զի Ռրողինէս խօսի ընդ ռաբունեաց, նախ՝ անընդունելի է՝ և անհիմն. երկրորդ՝ զհարդ լինէր զիւտ յետին լեզուաց, եթէ չունէին յառաջ լեզու յատկացեալ ինքեանց. երրորդ՝ զինչ պակաս եթող Աստուած յարածս իւր ըստ հարկաւորաց, զի զկնի ջրհեղեղին և հազարաւոր ամաց հնարեսցեն զլեզու ինքեանց:

Աւ արդ՝ ըստ որում են հոգեղէն գոյացութիւնք, բարեբաննն զԱստուած իմանալպէս՝ ընդ սրբոց երանելեացն հոգւոց, և խօսին ընդ միմեանս հազորդութեամբ խորհրդոց իմանալպէս, բառնալով զարդելս իմանալոյ. ըստ այնմ երգեաց երանելիս, «բարեբանեալ ի վերին զօրաց», : Բայց զի կրկնակի նկատի բարեբանելն կամ փառաւորելն հրեշտակաց զԱստուած, մինն ըստ բանի մտաց՝ զորմէ խօսեցաք, երկրորդ՝ ըստ բանի գործոյ, վասն որոյ զօրք անուն յարազրեաց. զօրութիւնդ անուն ի գործոյ առեալ տեսանի, և է յերկրորդ կարգի՝ երկրորդի դասուանուն՝ որք տան զօրութիւն ստորակայ հոգւոց ի գործ զնեղ զԱստուածային պաշտամունս. բայց զսկիզբն նկատելով միայն Միքայէլի ասացաւ, յորժամ ըստ բանի Տեառն ել Մովսէս՝ ի յԱպրովթ Մովսբու՝ ի լեառն Ասբաւ, ի կատարն Փե-

գովրայ, վախճանիլ անդէն. առ որ իջեալ Միքայէլի հրեշտակապետի՝ թաղեալ զնա. երկուցեալ ընդ այս սատանայի՝ մի՛ գուցէ բնակարանն քայքայեալ կործանեսցի, և ինքն հանդերձ զօրք իւրովք ցրուեալ հալածեսցի անտի ի զօրութենէ մարմնոյն Մովսիսեան. «զի երբեմն տեղին այն լեալ էր տեղի Փեգովրայ կոոց՝ բնակարան զիւլաց», պատերազմեցաւ ընդ հրեշտակին և վիճեալ տայր պստասխանի. և յաղթեալ բան ինչ ասաց առ Տէր. զոր սատեալ հրեշտակին անհետս արար ասելով, «Սաստեսցէ քեզ Տէր», : զորմէ վկայէ և սրբազան Առաքեալն Յուդայ յասելն, «Աւր Միքայէլ հրեշտակապետ, յորժամ բանսարկու սատանային վիճեալ տայր պատասխանի վասն Մովսիսեան մարմնոյն, ոչ ժպրհեցաւ հայհոյութեանն դատաստանին հանդուրժել, այլ ասէ, «սաստեսցէ քեզ Տէր», : Աւ մեկնիչ ոմն ասէ ի վերայ բանին, «Ո՞նման է քեզ Տէր», : զնի յԱբբայեցւոց «Բասիտահ պէլի՛ Աէօլահ, այսինքն է՝ ո՞վ որպէս զքեզ յԱստուածս Տէր», : Օսոյն ասէ զայս ասաց Միքայէլ ի վանել նորա իբրև զօրավար երկնից զբելիար և ի հարկանելն նորա սովաւ իրբև նեախ զհպարտութիւն նորա, ուստի և ի գործոյ աստի եղաւ նմա անունս Միքայէլ, որ ստուգաբանի՝ «ո՞վ է որպէս Աստուած», : Ասի յոմանց ասէ թէ Մակաբայեցիք զսոյն զայս բան զրեցին ի դրօշակս իւրեանց ի պատերազմիլն ընդ թշնամիս, այսինքն է ո՞վ է որպէս զքեզ յաստուածս Տէր, կամ ի հզօրս տէր: Աւ զի սկզբնատառից այսպիսի բառից յօդի ըստ Աբբայականի բառս Մասիտ, ասեն թէ յայսմանէ կոչեցան նոքա Մակաբեանք, կամ Մակա-

բայեցիք: Ապա ըստ այսմ ի գործոց ասացաւ Միքայելի զօրավար, և այլոց հրեշտակաց՝ զօրք՝ կամ հզօրք. զի են հզօրք ի գործս, և զօրք այսինքն է կատարողք կամաց Տեառն: Ըստ նմին ասէ և Առուսելիոս Ալափիտայ, այսպէս ասի Միքայել, այսինքն ո՞վ որպէս Աստուած: Օ, ի վասն մարդկանց պատերազմի ընդ դէմ հպարտ արուսեկին, որպէս Յովհաննէս գրէ ի Յայտ. զԼ. ԺԲ. 1. և զի հայելով ի գործըս նոցա՝ որովք ևս բարեբանեն զԱստուած, երգեաց ասելով, «ի վերին զօրաց», և Ա. ևս յօգնութիւն հասանելով մարդկան բարձր առնեն և բարեբանեն զՏէր. և այս բազում կերպիւ. նախ՝ սաստեն զմեզ վասն յանցանաց մերոց. Գատ. Բ. 1: Երկրորդ՝ ի բաց մերժեն զարգելումն բարւոյն: Երրորդ՝ զարթուցանեն զճոյլս, և որք ննջեն ի մեղս. Ելից. ԽԳ. 20: Չորրորդ հանդարտեցուցանեն զփորձութիւնս. Գ. Թագ. ԺԵ. զԼ. 5. որպէս ասէ Գանիէլ. Գ. 9: Հինգերորդ՝ զկապանս մեղաց լուծանեն, զչար երկիւղն, և զչար ցանկութիւնս, և զայնպիսիս՝ որք կապեն զմարդիկ ընդ աշխարհիս: Վեցերորդ՝ լինին ակոյեան ընդ դէմ երեւելի թշնամոյն: Եօթներորդ՝ յաղթեն կարողութեան աշխարհի. Գործ. ԺԲ. 7: Գ. Թագ. Օ. 1: Ելից ԺԲ. 29: Ութերորդ՝ զաղօթս մեր և զողորմութիւնս ընծայեն Աստուծոյ, և աղաչեն վասն մեր. Տօբ. ԺԲ. 12: Իններորդ՝ խափանեն զզօրութիւնս. Տօբ. Բ. 3: Տասներորդ՝ ցուցանեն զճանապարհս. Տօբ. Ե.: Մեծասաներորդ՝ ուսուցանեն զսպառնալիս. Օսքար. զԼ. Ե. 20: Երկոտասաներորդ՝ յայտնեն զգաղտնիս. Ծննդ. ԺԲ. 2: Ե-

րեքտասաներորդ՝ մխիթարեն զնեղեալս. Տօբ. Ե. 10: Չորեքտասաներորդ՝ հարկանեն զթշնամիս. Եսայ. ԼԵ. 36: Հնգեոտասաներորդ՝ հոգան վասն փրկութեան մարդկան. Եսայ. ԿԲ. 6: Վեշտասաներորդ՝ բարեխօսեն վասն փրկութեան մերոյ. Մատ. ԺԲ. 10. զի որպէս դեք միշտ չարախօսեն զմէնջ՝ նոյնպէս հրեշտակք միշտ բարեխօսեն. և այս է կուռելն հրեշտակաց ընդ վեշապին. Յայտ. ԺԲ. 7: Եօթնեոտասաներորդ՝ զհոգիս հաւատացելոց՝ յեւանելն ի մարմնոյն ընդունին. Ղուկ. Ժ. Օ. 22. զորմէ այսպէս խօսի Ս. Ոսկերեբան, «Բարձեալ լինէր ի ուսոց հրեշտակաց, զի մի և գնալովն կրեսցէ զաշխատութիւն. խնդութիւն է հրեշտակաց յայսպիսի բեռն մերձիլ. ահա այսպիսի գործովք մեծացուցանեն և բարեբանեն զԱստուած տիրեղերակալ՝ զօրացեալքն ի նմանէ, զօրութիւնքն արարչին, և զօրքն հզօրացեալք յայնմանէ որ ամենազօրն է ի հզօրս. վասն որոյ հրաշալի Հայրապետս գեղեցիկ դասաւորութեամբ քաղցրաբանեաց երգելով, «բարեբանեալ ի վերին զօրաց», և իբր կամի ասել՝ դու Տէր, որ զամենայն արարածս յամենաբուն բարութենէդ շարժեալ ստեղծեր յոչնչէ, զորս ըստ կարգի հանապաղ նախախնամես անչափելի ողորմութեամբ քով, տալով նպաստ զհզօրս տրկարաց, և ամենահզօրդ ամենեցուն լինելով նպաստ և զօրավիգ, և ոչ յումեքէ դարչիս՝ անձառ խնամակալութեամբ քով. վասն որոյ ի հրեղինաց և ի հոգեղինաց վերընծայի բարեբանութիւն առ մեծ վայելչութիւն Աստուածութեան քոյ, է որ բանիւ մտաց, է որ բանիւ բերանոյ, է որ բանիւ գործոյ. յերկոցունց պատարագ

օրհնարանութեան մատչի ամենակալ մեծութեան քո. լեր ուրեմն և մեզ ամենազօր աջով քո պաշտպան. զի արժանապէս բարեբանեսցուք զքեզ ընդ վերին զօրաց և ընդ սրբոց քոց. յորոց հանապաղ բարեբանի տէրութիւն քոյ. վասն որոյ յարէ ասելով «և ի սրբոց քոց», Բարեբանութիւնք սրբոց ի յերկինս նման են ըստ կերպի բարեբանութեանց հրեշտակաց, և ըստ իրին զանազան. զի և նոքա հոգիք են անջատեալք ի մարմնոց իւրեանց. և զայս ետես սրբազան Աւետարանին Յովհաննէս ի յայտնութեան իւրում, որպէս ասէ. «Տեսի և ահա գառն կայր ի վերայ լերինն Սիօնի. և ընդ նմա հարիւր քառասուն և չորք հազարք, որք հարկանէին զքնարս իւրեանց, և երգէին զերգս նորս, և ոչ ոք կարէ երգել զերգս նոցա», այսինքն է ոչ ոք ի մարմնաւորաց կարէ երգել, զի ըստ կերպի հրեշտակաց երգէին իմանալապէս. վասն որոյ միանգամայն Խիւշակապեալ երգէ «և ի սրբոց քոց», սուրբք եղեալ հաղորդութեամբ սիրոյ՝ նոր պատուիրանաց, և ոչ էութեամբ սուրբք որպէս զաստուած. ուստի յարէ «քոց», այս ինքն է յայնց՝ որք զքեզ սիրեցին և զպատուիրանս քո պահեցին, և հաղորդեցին մեծի փառաց քոց. զի որպէս եղին չարչարանաց քոց կցորդք, նոյնպէս եղին և փառացն ըստ Պօղոսի առաքելոյն: Աւայս մեզ յոյս հաստատուն՝ որով և մեք յաւուր յայնմիկ՝ յորում գայցէ տէր ի դատել զարարածս, ունիմք ընկալուել զպսակն փառաց, եթէ գտանիցիմք հաղորդեալ չարչարանաց և վշտաց նորա ուրախութեամբ ընդգրկեալ, և խառնիլ ի գունդս հրեշտակաց, փառաւորեալ օժ-

տիւք՝ ըստ փառաց յարուցելոյն Վրիստոսի, որպէս ասէ աստուածաբան Աւետարանին Յովհաննէս. «Յորժամ յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք», այսինքն է անկիր անապական, նուրբ, և անմահ, և ըստ հոգւոյ՝ անպատում ցնծութեամբ և բերկրապատար խնդութեամբ լցեալ: Բայց յայսմ վայրի վարդապետք զանազան կարծիս յառաջ բերեալ սահմանեալ փակեն զորդիս փրկութեան: Ոմանք ի նոցանէ՝ որպէս սուրբն Օգոստինոս գրէ. «Չի մարդիկ ասէ ըստ ինքեանց ոչ. . զկարգ ի յերկինս, այլ վերանալիք են ի դասս հրեշտակաց», ապա ասէ «այնչափ մարդիկ փրկեսցին՝ որքան անկեալ են դեք», և եկեղեցին երգէ, «Այգէք զտեղե անկելոց ապստամբողական թշնամւոյն որ ի յերկնից վայր անկեալ», Աւ սուրբն Պրիզոր ասէ՝ այնքան փրկեսցին որքան հրեշտակք մնացին», և ալք այլ իմն կերպիւ. թէպէտ զայս ոչ ոք զիտէ բաց յԱստուծոյ, այլ որպէս թուի՝ թէպէտ մի կարգ է լինելոց արդարոց և հրեշտակաց որպէս հանապաղ երգէ սուրբ եկեղեցին ասելով, «Խառնեցան ի գունդս վերին զուարթնոց», և թէ «ի բիւրաւոր բանակս հրեշտակաց միաւորէ զհաւատացեալս անուանիւրոյ», բայց ոչ ըստ թուոյ անկելոց փրկեսցին, և ոչ ըստ թուոյ մնացելոց, այլ իւրաքանչիւր ոք անձնիշխանական կամօք իւրովք փրկին կամ կորնչին ըստ սրբոյ Ոսկերեւանի. զի կամի Աստուած զի ամենքեան կեցցեն և ի դիտութիւն ճշմարտութեան եկեսցեն ըստ նախորդ կամաց իւրոց. սովին յուսով սպասեսցուք, զի ի գալ փեսային մեր հոգւոյ ընդ առաջ յամպս ելեալ լսել զկենսատու քաղցր

ձայնն՝ որ ասէ, «Ահայք օրհնեալք հօր  
 ինոյ ի պատրաստեալ խնդութիւնն», զոր  
 և մեր ժառանգեալ անպայման խնդու-  
 թեամբ ընդ հրեշտակաց բարեբանեացուք  
 յանսահման ժամանակաց յաւիտենից,  
 զսոյն զայս ծանոց երանաշնորհ հայրա-  
 պետս՝ զմիաձայն երգելն զերգս օրհնու-  
 թեան սրբոցն ընդ հրեշտակաց յարելն,  
 «Ե ի սրբոց քոց», որպէս թէ ասել կա-  
 մի՝ դու տէր որ ուրախութիւնդ ես ամե-  
 նեցուն՝ ոչ միայն ի ջնաշխարհիկ պարուց  
 հոգեղինացն բարեբանեալ գովես, այլ և  
 ի սրբոց քոց՝ ի հայրապետաց՝ ի մարգա-  
 բէից՝ յառաքելոց և ի կուսանաց, որք  
 յորդեռանդ սիրով միացան ընդ քեզ, և  
 եղին ստացողք վերին քաղաքին, և անան-  
 ցանելի ցնծութեանն և փառաց արքա-  
 յութեանն, և ապա յարէ, «Տէր Աստ-  
 ուած հարցն մերոց», Ըստ չորեքկին բա-  
 ուից՝ ի չորս իմաստս ակնարկէ. մի՝ ի մե-  
 ծաղօր տէրութիւնն, երկրորդ՝ ի դաւա-  
 նութիւն ճշմարտութեան, երրորդ՝ ի  
 ցոյց խոնարհութեան, և չորրորդ՝ ի ցոյց  
 ընտրութեան:

Ըստ առաջնոյն ասէ՝ Տէր, տէրութիւնն  
 երեքկին իմանի, առնելով, երկրորդ՝ գնելով,  
 երրորդ՝ տալով. ըստ երկրցս ևս ասի տէր՝ Աս-  
 տուծոյ: Ըստ առաջնոյն առնելով զմեզ յո-  
 չնչէ մարդ բանական՝ Տէր ասի. ըստ երկ-  
 րորդին՝ գնելով զմեզ անդին և աստուածա-  
 ցեալ արեամբն. ըստ երրորդին՝ տալով զհո-  
 գեկան և զմարմնական պիտոյս: Ասան որոյ  
 կամի ասել, «Չքեզ Տէր ամենայնի և իշ-  
 խան զիտեմք և խոստովանիմք, զե դու տի-  
 բես ամենեցուն զոյացուցանելով զնոսս յո-  
 չնչէ, զերկնաւորս, զերկրաւորս, զզգալիս  
 և զանզայս. և ամենեքեան ազազակեն

«Տէր տէր մեր՝ զի՞ սքանչելի անուն քո ի  
 վերայ ամենայն երկրի», Եւ զե գնեցեր  
 զմեզ պատուական արեամբդ քով, փրկե-  
 լով ի ձեռաց թշնամոյն բարձրացեալ բաղ-  
 կաւ և հղօր ձեռամբ, ուստի յաւիտպէս  
 դոչեմք ասելով «Ալէլուիա, փրկութիւն և  
 փառք, և պատիւ և զօրութիւն Աստու-  
 ծոյ մերում: Աւ զարձեալ այլուիա, վասն  
 զի թագաւորեաց Տէր Աստուած մեր ամե-  
 նակալ: Աւ ևս իմաստութեամբ նախա-  
 ինամես տալով զպիտոյս կարևորս ըստ հո-  
 գւոյ և ըստ մարմնոյ ի փառս մեծի ան-  
 ուան քոյ սրբոյ, վասն որոյ ըստ մարգարէ-  
 ին գոչեմք, «Տաս դու նոցա՝ և կերակ-  
 րին, բանաս զձեռն քո և լցուցանես զա-  
 մենեսեան քաղցրութեամբ կամօք քովք»,  
 Ուրեմն կամիմք զի մի՛ տիրեսցէ ի վերայ  
 մեր իշխանն օգոյս սատանայ, այլ դու որ  
 ամենայնի ես ճշմարիտ տէր և իշխող և  
 ինամող Աստուած ամենեցուն: Ապա զայս  
 հոգւով խոստովանիմք և բերանով դա-  
 ւանիմք որ ես մեզ ճշմարիտ «Աստուած»,  
 Անունս Աստուած գոլով անհաղորդ ա-  
 բարածոց ըստ գործոյն, զի աստուածդ տ-  
 նուն ստուգարանի «աստ էած», առեալ  
 ի գործոյն՝ այս ինքն է ամող յոչնչութենէ  
 ի գոյութիւն, վասնորոյ յատուկ է ասիլ  
 զԱստուծոյ՝ ըստ թոյմայի, և ըստ Տերտիւ-  
 ղիանոսի, աստուածդ անուն ի գոյացութենէ  
 է նորս անուն այսինքն Աստուածութեան,  
 իսկ տէրն ոչ գոյացութեան, ապա գոլով  
 էական անուն աստուծոյ, անհաղորդ է այ-  
 լոց արարածոց, և եթէ ասին աստուածք՝  
 հաղորդութեամբ և նմանութեամբ ընծա-  
 յի այն անուն նոցա, և ոչ իսկապէս, ապա  
 կամի ասել ոչ միայն տէր՝ այլ և աստուած,  
 այսինքն ամող զամենեսեան յոչնչէ ի գո-

յուծիւն. ուրեմն ոչ միայն զքեզ Տէր կարգաւ պարտաւոր եմք, այլ և Աստուած և ստեղծող ճշմարտապէս դաւանիմք, ոչ մեզ և եթ, այլ և «հարցն», : Ի նախնի հարցն մերոց երկրպագեալ, և ճանաչեալ, ի նահապետաց և ի մարգարէից, յառաքելոց և ի վկայից. և որպէս երևի առեալ զայս սուրբ Ազնկեցի յօրհնութենէ երկից մանկանց յամենայն աւուր երգէ քաղցրաձայնութեամբ բերանով ուխտի մանկանց, որպէս թէ ասելով, ոչ միայն ի հին Խորայէլէ ես ծանօթացեալ, այլ և ի նորոյս. և որպէս նոքա խոստովանին թէ Աստուած ես հարցըն, Աբրահամու, Իսահակայ և Յակօբայ, պատշաճապէս երգեմք և մեք. յառաքելոց քարոզեալ, ի հայրապետաց դաւանեալ, և ի վկայից խոստովանեալ ճանաչեմք զճշմարտութիւն քո և հանապազ քարոզեմք զտէրութիւն քո ի վերայ ամենայն երկրի. ուստի յարէ «մերոց», ցուցեալ զընտանութիւն որպէս թէ ասելով, ո՞վ Տէր թէպէտ եմք բիւրապատիկ մեզօք լցեալք, և զանբարկանալիզ ի բարկութիւն շարժեալ, այլ ոչ յուսահատիմք և ոչ

խապառ յիտս դառնամք. այլ հայիմք ի բազմազթութիւն սիրոյ քո, և յողորմութեամբ ընտանութիւն քո ընդ հարցն մերոց. վասնորոյ համարձակապէս դիմեմք և կարդամք զքեզ ծանօթացեալք ի հարց մերոց, և խոստովանեալք յամենեցունց ասելով «Տէր Աստուած հարցն մերոց», : Ի սոյն բանիս ոչ յիտս նահանջիմք՝ այլ բոլորով սրտիւ խոստովանիմք, և ոչ գաղջանամք՝ ոչ ի յաջողութենէ և ոչ ի ձախորդութենէ. զի յաջող կեանք՝ ի քէն ողորմութեամբ շնորհի առ մեզ, և ձախող ելք՝ ի մեղաց և ի յանցանաց մերոց արդարապէս ժամանեալ. ուրեմն ընդ հասանել յաջող ելից, զբարերարութիւն քո խոստովանիմք փայլեալ ի մեզ. և ընդ երազել ձախորդութեանց, զքաւութիւն մերոց մեղաց՝ յառատ մարդասիրութիւն քո ապաւինեալ, խնդրեմք շնորհել, ըստ երկից մանկանց օրհնաբանութեանց. ապա զեղիցիկ հետեւեցուցանէ պաղատախառն հայցուածք ի դէպ ժամու օգնականութեան յասելն,

(Շորհանգիլի)

ՔՐԻՍՏՈՍ Ի ԴԵՏՆ ՅՈՐԴԱՆԱՆ.

Որ զԲարձրեղոյն քննես զխորս, սիւզ յիս շնչեա, Սուրբ Հոգի,  
 Երգել ի լուր տիեզերաց զհրաշից Փրկչին Յիսուսի,  
 Աւճ արարածք մշտամրմունջ որովբէական օրհնութեամբ  
 Գովնն, և մեր բազկատարած ծունր ածեմք զօհնութեամբս  
 Տուր ինձ՝ երգովք հրճուիլ ընդ հոյս փառաբանչացն անմահից,  
 Եւ փրկութեան տօնել զայս օր Աստուածորդոյն կենսալից,  
 Որ անթարգման կամք Ծնողին էջ Աստուածեանն ի գահէն,  
 Անպարագիր ծնաւ մարմնով անշուք յայրին ի Կուսէն,  
 Օրհնեալ է Տէր, որ քաղցր ակամբ յիւրն ի պատկեր ակնարկեաց,  
 Եւ չար զաղէտ տեսեալ հոգոց մերոց, այլ ոչ հանդուրժեաց.